

**ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն ընդհանուր դրույթները և պայմանները (**Պայմաններ**) սահմանում են «ՄԻՕՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (**Օպերատոր**) կողմից տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման կարգը, դրույթները և պայմանները:

Սույն Պայմանները համարվում են հրապարակային օֆերտա, որը Բաժանորդը ակցեպտավորում է՝ ամբողջությամբ և անվերապահորեն ընդունելով դրանք: Սույն օֆերտան Բաժանորդը ակցեպտավորում է՝ բաժանորդային պայմանագրի ստորագրմամբ: Բաժանորդային պայմանագիրը բաղկացած է սույն Պայմաններից, Բաժանորդի դիմումից, Սակագնային պլանից, հատուկ առաջարկներից (եթե այդպիսիք լինեն):

1.2. Օպերատորն իր ծառայությունները մատուցում է  ապրանքային նշանի ներքո:

2. Հասկացություններ և սահմանումներ

Սույն Պայմաններում հասկացություններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը.

«**Օպերատոր**»՝ «ՄԻՕՍ» ընկերություն, որը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում) թիվ **0098** լիցենզիայի հիման վրա մատուցում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ:

«**Ծառայություն**»՝ Ինտերնետ հասանելիության և տվյալների փոխանակման ծառայություն:

«**Բաժանորդ**»՝ Ինտերնետ հասանելիության և տվյալների փոխանակման ծառայություն օգտագործող, ում հետ կնքվում է Բաժանորդային պայմանագիր:

«**Վերջնակետային սարքավորում**» (**Բաժանորդի սարքավորում**)՝ Բաժանորդի օրինական տիրապետության տակ գտնվող տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, ներառյալ ծրագրային ապահովումը, որոնք Բաժանորդին հնարավորություն են տալիս օգտվել ծառայություններից՝ այդ սարքը (սարքավորումները) միացնելով Օպերատորի ցանցին (համակարգիչ, մոդեմ, ուղղորդիչ և այլն):

«**Օպերատորի սարքավորումներ**»

«**Բաժանորդային վարձ**»՝ Բաժանորդի կողմից ինտերնետին մշտական հասանելիության համար ֆիքսված վճարային դրույքաչափ՝ անկախ իրականում սպառված ծառայությունների ծավալից:

«**Վնասակար ծրագրային ապահովում**»՝ ծրագրային ապահովում, որը միտումնավոր հանգեցնում է օգտատերերի և/կամ Օպերատորի օրինական իրավունքների խախտմանը, ներառյալ տեղեկատվության չարտոնված հավաքագրմանը, մշակմանը կամ փոխանցմանը, կամ Վերջնակետային սարքավորումների կամ Ցանցի աշխատանքային պարամետրերի վատթարացմանը:

«**Բաժանորդների սպասարկում**»՝ ծառայություն, որը հնարավորություն է տալիս Բաժանորդին հատուկ հեռախոսահամարի միջոցով զանգահարելով, էլեկտրոնային փոստի միջոցով

հաղորդագրություն ուղարկելով ստանալ մատուցվող Ծառայությունների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:

«**Բաժանորդային պայմանագիր**»՝ սույն Պայմաններով նախատեսված Ծառայությունների մատուցման վերաբերյալ միանալու պայմանագիր:

«**Պահանջվող փաստաթղթեր**»՝ Բաժանորդային պայմանագիր կնքելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք հաստատում են Ծառայությունից օգտվել ցանկացող անձի, հասցեն, իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ գրանցման կամ հաշվառման տվյալները, վճարունակությունը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

«**Հաշվետու ժամանակաշրջան**»՝ Բիլինգի օրվանից սկսած մինչև հաջորդ Բիլինգի օրն ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում մատուցվել են Ծառայությունները:

«**Բիլինգի օր**»՝ յուրաքանչյուր ամսվա վերջին կամ Բաժանորդային պայմանագրով նախատեսված այլ օր, երբ ամփոփվում են Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց վճարման ենթակա կամ արդեն վճարված գումարը:

«**Սակագնային պլան/փաթեթ**»՝ Բաժանորդի կողմից ընտրվող որոշակի հատկանիշներով օժտված ծառայություն, որի անվանումը, առանձնահատկությունները, մատուցման պայմանները, գները և այլ տեղեկություններ ներկայացված են Օպերատորի սպասարկման կենտրոններում և/կամ հրապարակված են Օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքում:

«**Բաժանորդային գիծ**»՝ Բաժանորդի Վերջնակետային սարքավորումը Օպերատորի ցանցին և տեխնիկական միջոցներին միացնող կապուղի:

«**Լրացուցիչ ծառայություններ**»՝ Ծառայությունների մատուցման գործընթացի տեխնոլոգիական աջակցության հետ կապված օժանդակ ծառայություններ (Բաժանորդի սարքի միացում Ցանցին, Բաժանորդի սարքավորումների կարգաբերում և Օպերատորի սակագներով նախատեսված այլ ծառայություններ):

«**Միացում**»՝ Օպերատորի կողմից Բաժանորդային գիծ ձևավորելու և Բաժանորդի Վերջնակետային սարքավորումները դրա միջոցով միացնելու գործողությունների ամբողջություն Բաժանորդին Ծառայություններ մատուցելու հնարավորությունն ապահովելու համար:

«**Ցանց**»՝ տեխնոլոգիական համակարգ, որը ներառում է կապի միջոցներ և կապուղիներ և նախատեսված է ինտերնետ հասանելիության և տվյալների փոխանակման ծառայություններ մատուցելու համար:

«**Դիմում**»՝ Բաժանորդի դիմումը Օպերատորին Բաժանորդային պայմանագիր կնքելու, դադարեցնելու կամ սակագնային պլան փոփոխելու վերաբերյալ:

«**ՄՊԱՄ**»՝ անորոշ թվով անձանց ուղղված էլեկտրոնային հաղորդագրությունների զանգվածային առաքում, որն իրականացվում է, առանց այն ստացող անձանց համաձայնության և հնարավոր չի լինում որոշել ուղարկողին:

«**Վաճառքի և սպասարկման կենտրոն (ներ)**»՝ Բաժանորդների սպասարկման համար Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայությունների վաճառքի և սպասարկման կենտրոն(ներ):

3. Ծառայությունների մատուցման պայմանները

3.1. Սույն Պայմաններն Սակագնային պլաններն ուսումնասիրելուց հետո, Բաժանորդը ընտրում է Ծառայության որոշակի տեսակ և Օպերատորին է ներկայացնում Դիմում,

ստորագրում է Պայմանագիրը և վճարում Միացման վճար (եթե այդպիսի վճար նախատեսված է): Եթե Պայմանագրում այլ բան նշված չէ, Բաժանորդի հասցեն Բաժանորդի Վերջնակետային սարքավորումների միացման հասցեն է:

3.2. Ստացված Դիմումի հիման վրա Օպերատորը առավելագույնը **6 աշխատանքային օրվա ընթացքում** կազմակերպում է Միացումը Բաժանորդի հասցեում, եթե նման տեխնիկական հնարավորություն կա: Բաժանորդի խնդրանքով և առանձին պայմանագրի համաձայն, Օպերատորը կարող է միացնել Բաժանորդի Վերջնակետային սարքավորումները Ցանցին և կատարել դրանց նախնական կարգավորումը, եթե այդ սարքավորումները համապատասխանում են ընդունված ստանդարտներին, **հավաստագրված են** և դրանց կարգավորումը չի պահանջում Օպերատորի կողմից լրացուցիչ ծախսեր և ռեսուրսներ:

Միացման ժամկետը կարող է երկարաձգվել Օպերատորի մոտ աշխատանքային մեծ ծանրաբեռնվածության կամ այլ խոչընդոտների դեպքում (տեխնիկական հնարավորությունների բացակայություն, երրորդ անձանց կողմից աշխատանքի խոչընդոտում և այլն):

3.4. Միացումն ավարտելուց հետո Օպերատորը փորձարկում է Ծառայությունների ֆունկցիոնալությունը, որի արդյունքների հիման վրա Բաժանորդի հետ կարող է կնքվել աշխատանքների կատարման ակտ: Աշխատանքը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված, եթե Բաժանորդին Ցանցին հասանելիություն տրամադրելու և կապի սեանսներ անցկացնելու թույլտվություն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում Բաժանորդը չի ուղարկում Օպերատորին աշխատանքը ընդունելու գրավոր, պատճառաբանված մերժում:

3.5. Ընտրված Ծառայության Բաժանորդային վճարը Բաժանորդը վճարում է հետվճարային կամ կանխավճարային եղանակով՝ ըստ ընտրված Սակագնային պլանի պայմանի:

3.6. Օպերատորն իրավունք ունի սահմանափակումներ կիրառել Բաժանորդին մատուցվող Ծառայության նկատմամբ միայն այն դեպքերում, երբ նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ կամ Բաժանորդի կողմից թույլ է տրվել Բաժանորդային պայմանագրի խախտում: Բաժանորդի մեղքով սահմանափակում կիրառելու դեպքում սահմանափակման կիրառման ընթացքում հաշվեգրված եւ վճարված գումարները ենթակա չեն վերադարձման:

3.7. Ծառայություններից օգտվելու որոշ սարքավորումներ տրամադրում է Օպերատորը: Այդ սարքավորումները Օպերատորը կարող է առաջարկել հատուկ պայմաններով, այդ թվում՝ որոշակի ժամկետում Օպերատորի Բաժանորդը մնալու պարտավորությամբ կամ Օպերատորի կողմից սահմանված այլ պարտավորությամբ: Օպերատորը կարող է նաև առաջարկել սարքավորումներ օգտագործման/տիրապետման իրավունքով կամ այլ հիմունքներով:

3.8 Բաժանորդը իրավասու չէ Օպերատորի տրամադրած սարքավորումը այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ որևէ այլ կերպ փոխանցել այն կամ որևէ փոփոխություն կատարել դրանում և պարտավոր է սարքավորման վնասման, կորստի կամ հափշտակության դեպքում Օպերատորին վճարել դրա արժեքն անմիջապես, բայց ոչ ուշ քան Օպերատորի կողմից նման պահանջ ներկայացնելու պահից 10 օրվա ընթացքում: Սարքավորման կորստի կամ հափշտակության դեպքում, Բաժանորդը պարտավոր է Օպերատորին անհապաղ տեղեկացնել այդ մասին՝ ներկայացնելով համապատասխան գրավոր ծանուցում կամ զանգահարելով Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոն և ներկայացնելով Օպերատորի կողմից պահանջվող փաստաթղթերը:

3.9. Բաժանորդը պարտավոր է զերծ մնալ Օպերատորի տրամադրած սարքավորման ոչ պատշաճ, անօրինական և չարաշահումներով օգտագործումից և թույլ չտալ դրա օգտագործումը չլիազորված անձանց կողմից: Օպերատորը չի կրում որևէ պատասխանատվություն իրենից ձեռքբերված սարքավորման միջոցով Բաժանորդին

պատճառված վնասի համար, ինչպես նաև Բաժանորդի և այլ անձանց կողմից սարքավորմանը պատճառած վնասի համար: Բաժանորդն է նաև պատասխանատվություն կրում սարքավորման միջոցով ծառայությունների ցանկացած օգտագործման համար: Օպերատորի կողմից տրամադրված սարքավորման տիրապետողը կհամարվի Բաժանորդը, սարքավորման միջոցով իրականացված գործողությունները կհամարվեն կատարված Բաժանորդի անունից և ի շահ Բաժանորդի և նման օգտագործման հետևանքով առաջացած բոլոր պարտքերը և դրանք մարելու պարտավորությունը կկրի Բաժանորդը:

3.10. Բաժանորդն իրավասու չէ օգտագործել Օպերատորի կողմից տրամադրված սարքավորումը անհամատեղելի կամ նման օգտագործման համար չնախատեսված սարքավորման հետ կամ օգտագործել այն որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Օպերատորի Ցանցին կամ սարքավորումներին կամ ազդել դրանց գործառնության վրա:

3.11. Բաժանորդային Պայմանագրի լուծման պահից Բաժանորդը պարտավոր է վերադարձնել Օպերատորին սարքավորումը՝ այդպիսի պահանջ ստանալու դեպքում և ծանուցումն ստանալու պահից զերծ մնալ այն օգտագործելուց:

3.12. Բաժանորդն իրավունք ունի պահանջել փոփոխելու իր վերաբերյալ Օպերատորի մոտ առկա անհատական տվյալները (անվանափոխություն, հասցեափոխություն և այլն)՝ դիմելով Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոն և ներկայացնելով Օպերատորի կողմից սահմանված ձևի դիմում և պահանջվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

4. Բաժանորդային պայմանագիր

4.1. Ծառայությունները մատուցվում են Օպերատորի կողմից՝ համաձայն սույն Պայմանների, Սակագնային պլանի և Օպերատորի ու Բաժանորդի միջև կնքված Պայմանագրի: Ծառայությունների ամբողջական ցանկը, դրանց բնութագրերը և գները սահմանվում են Օպերատորի Սակագնային պլաններում:

4.2. Պայմանագիրը ստորագրվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ՝ մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար:

4.3. Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Բաժանորդի խնդրանքով կարող է կնքվել որոշակի ժամկետով Պայմանագիր:

4.4. Օպերատորն իրավասու է ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարել սույն Պայմաններում և Սակագնային պլաններում՝ այդ փոփոխությունները հրապարակելով իր պաշտոնական կայք էջում: Օպերատորը պարտավոր է Բաժանորդին ծանուցել բոլոր այն փոփոխությունների վերաբերյալ, որոնք ունեն Բաժանորդի իրավական վիճակը վատթարացնող բնույթ: Նման փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում Բաժանորդին ծանուցելու պահից 30 օր հետո:

4.5. Բաժանորդն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Բաժանորդային պայմանագիրը, առանց իր համար որևէ իրավական հետևանքի (տույժ, տուգանք, հրաժարագին և այլն) հետևյալ դեպքերում՝

4.5.1. Սույն Պայմաններում, Սակագնային պլաններում կամ Բաժանորդային պայմանագրում կատարվող փոփոխությունները վատթարացնում են Բաժանորդի իրավական վիճակը, բացառությամբ այն փոփոխությունների, որոնք ՀՀ օրենսդրության պահանջ են;

4.5.2. Որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորության պայմանով ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող Պայմանագրերի դեպքում՝ գործողության ժամկետի ինքնաբերաբար երկարաձգումից հետո առնվազն 30 օրվա ընթացքում Պայմանագիրը դադարեցնելու դեպքում:

4.6. Սույն Պայմանների 4.4. կետում նշված փոփոխությունների, լրացումների, ինչպես նաև

որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող Պայմանագրերի սկզբնական գործողության ժամկետի, ինչպես նաև երկարաձգման արդյունքում սահմանված գործողության յուրաքանչյուր ժամկետի ավարտի վերաբերյալ Օպերատորը պարտավոր է ծանուցումներ ուղարկել Բաժանորդին կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային նամակների, ավտոմատ հեռախոսազանգերի կամ հեռուստատեսային հաղորդագրությունների (TVMS) միջոցով: Պայմանագրի ժամկետի ավարտի վերաբերյալ ծանուցումները ուղարկվում են Պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 5 օր առաջ:

4.7. Օպերատորի կողմից սույն Պայմաններում, Սակագնային պլաններում կամ Բաժանորդային պայմանագրում կատարվող ցանկացած փոփոխություն հրապարակվում է Օպերատորի պաշտոնական կայք էջում:

5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Օպերատորը պարտավոր է.

5.1.1. մատուցել Ծառայություններ՝ համաձայն Բաժանորդային պայմանագրի, սույն Պայմանների, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ծառայությունների համար սահմանված ազգային ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և կանոնների:

5.1.2. Բաժանորդի դիմումի հիման վրա միացնել Բաժանորդին Ցանցին և տրամադրել նույնականացման տվյալներ (**մուտք, գաղտնաբառ, անձնական հաշվի համար**), բացառությամբ սույն Պայմաններով նախատեսված դեպքերի:

5.1.3. ապահովել Ցանցի տեխնիկապես կայուն վիճակը և գործունակությունը:

5.1.4. Բաժանորդին անընդմեջ մատուցել Ծառայություններ՝ օրական 24 ժամ (բացառությամբ Օպերատորի կամ երրորդ կողմի կազմակերպությունների կողմից սարքավորումների հանկարծակի խափանումների, պլանային կանխարգելիչ և պլանային սպասարկման, ինչպես նաև ծառայությունների մատուցման անհնարինության հանգեցնող վթարների և այլ դեպքերի, որոնք խոչընդոտում են Ծառայությունների մատուցման տեխնիկական հնարավորությանը):

5.1.5. ապահովել հաղորդակցությունների գաղտնիությունը և պաշտպանել Բաժանորդների և նրանց Ծառայությունների մասին տեղեկատվությունը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

5.1.6. Օրենքով նախատեսված դեպքերում կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Ծառայությունների մատուցումը:

5.1.7. Բաժանորդի դիմումի հիման վրա, առավելագույնը **3** օրվա ընթացքում վերացնել Ծառայություններից օգտվելուն խոչընդոտող անսարքությունները՝ հաշվի առնելով տեխնիկական հնարավորությունները, բացառությամբ անհաղթահարելի ուժի հանգամանքների և Օպերատորի կողմից տարածք մուտք գործելու անկարողության դեպքերի: Բաժանորդի պատճառով առաջացած անսարքությունները կվերացվեն՝ հաշվի առնելով տեխնիկական հնարավորությունները, լրացուցիչ վճարի դիմաց՝ համաձայն գործող սակագների:

5.1.8. Բաժանորդին տեղեկացնել ոչ ուշ, քան 24 ժամ առաջ Ծառայությունների ցանկացած կասեցման կամ սահմանափակման մասին:

5.1.9. Բաժանորդի գրավոր պահանջի հիման վրա կասեցնել Ծառայությունները՝ Բաժանորդի կողմից նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան **90** օրացուցային օր ժամկետով:

5.1.10. Ապահովել Սակագների ճիշտ կիրառումը և Բաժանորդին մատուցվող Ծառայությունների ճշգրիտ հաշվառումը:

5.2. Օպերատորն իրավունք ունի՝

5.2.1. Միակողմանիորեն սահմանել կամ փոփոխել Պայմանները և Սակագնային պլանները:

5.2.2. Ժամանակավորապես դադարեցնել կամ սահմանափակել Ծառայությունների մատուցումը բնական կամ մարդածին արտակարգ իրավիճակների ժամանակ:

5.2.3. Կասեցնել լրացուցիչ անվճար ռեսուրսներին և ծառայություններին մուտքը՝ առանց Բաժանորդին զգուշացնելու:

5.2.4. Կասեցնել Ծառայությունների մատուցումը. Եթե Բաժանորդը չի վճարում մատուցված Ծառայության համար, Ցանցին միացրել է այլ չսերտիֆիկացված սարքավորում, իրականացրել է Բաժանորդին տրամադրված սարքի վրա չարտոնված կարգավորումների օգտագործում, այլ Բաժանորդների իրավունքների խախտում, Օպերատորի սերվերներին չարտոնված մուտք գործելու փորձ կամ որևէ այլ կերպ խախտել է սույն Պայմանները:

5.2.5. Հրաժարվել վերաակտիվացնել Բաժանորդի Ծառայությունը, որը դադարեցվել է Պայմանագրի և Պայմանների խախտման համար կամ պահանջել վերաակտիվացման վճար:

5.2.6. Կատարել Ցանցի պլանային սպասարկում և արդիականացումներ, որոնք կարող են հանգեցնել Ծառայության ընդհատումների:

5.2.7. Օգտագործել Բաժանորդի անձնական տվյալները Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Պայմանագիրը ստորագրելով՝ Բաժանորդը համաձայնություն է հայտնում Օպերատորի կողմից Բաժանորդի անձնական տվյալների մշակմանը նշված նպատակներով, ներառյալ անձնական տվյալների փոխանցումը երրորդ կողմերին՝ Բաժանորդային պայմանագրի կատարման և Ծառայության մատուցման նպատակով:

5.3. Բաժանորդը պարտավորվում է՝

5.3.1. Օգտվել Ծառայություններից՝ համաձայն սույն Պայմանների, Սակագնային պլանի և Բաժանորդային պայմանագրի պահանջների:

5.3.2. Վճարել Ծառայության համար ամբողջությամբ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում՝ համաձայն ընտրված Սակագնային Պլանի:

5.3.3. Օգտագործել Օպերատորի տրամադրած սարքավորումները, Բաժանորդային գիծը միայն Օպերատորի կողմից տրամադրված Պայմանագրով նախատեսված Ծառայությունները ստանալու համար:

5.3.4. Ապահովել Օպերատորի աշխատակիցների (Օպերատորի կողմից լիազորված անձանց) անարգել մուտքը՝ Պայմանագրի կատարման և Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատանքները կատարելու համար:

5.3.5. Տեղեկացնել Օպերատորին Ծառայության ցանկացած ընդհատման մասին:

5.3.6. Տեղեկացնել Օպերատորին Ծառայությունների մատուցմանը խոչընդոտող ցանկացած հանգամանքի կամ երրորդ կողմերի գործողությունների մասին:

5.3.7. Ջերժ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են նպաստել Վնասակար ծրագրերի տարածմանը, Օպերատորի Ցանցի միջոցով ՍՊԱՄ-երի առաքմանը:

5.3.8. Այլ անձի չփոխանցել իր մուտքանունն ու գաղտնաբառը:

5.3.9. Չօգտագործել Ծառայությունները անօրինական նպատակներով, չկատարել գործողություններ, որոնք վնաս են հասցնում Օպերատորին և/կամ երրորդ կողմերին, չկատարել գործողություններ, որոնք խոչընդոտում են Օպերատորի և երրորդ կողմերի ցանցի, սարքավորումների և ծրագրային ապահովման բնականոն գործունեությանը (ներառյալ հատուկ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովման օգտագործումը):

6. Գները և վճարումները

6.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդը վճարում է Բաժանորդային վարձ՝ համաձայն Սակագնային պլանի:

6.2. Կախված Սակագնային պլանից/փաթեթից, Ծառայությունների դիմաց վճարումները պետք է կատարվեն կանխավճարային կամ հետվճարային եղանակով, ինչպես նաև կարող է պահանջվել երաշխիքային դեպոզիտ կամ այլ երաշխիք:

Բաժանորդային վարձը Բաժանորդը պարտավոր է վճարել նաև այն դեպքում, եթե չի օգտվել Ծառայությունից Բաժանորդի տարածքից բացակայելու կամ իրենից կախված այլ պատճառներով:

6.3. Ծառայությունը մատուցելու համար կարող են սահմանվել միացման և այլ վճարներ, որոնց մասին Բաժանորդը լրացուցիչ կտեղեկացվի Օպերատորի կողմից՝ նախքան Բաժանորդային պայմանագրի կնքումը:

6.4. Իրեն ներկայացված հաշիվներում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում մինչև վճարում կատարելու համար սահմանված ժամկետի ավարտը Բաժանորդը պետք է հայտնի այդ անհամապատասխանությունների մասին Օպերատորին՝ վիճարկելով հաշիվը: Վերոհիշյալ ժամկետի ավարտից հետո Բաժանորդը չի կարող այլևս վիճարկել Հաշվետու ամսվա համար Օպերատորի կողմից ներկայացված հաշիվը:

6.5. Բաժանորդի կողմից սխալ վճարումներ կատարելու դեպքում (գումարի սխալ չափ կամ վճարողի վերաբերյալ սխալ տեղեկություններ) Օպերատորն իրավասու է կատարել համապատասխան ուղղումներ բացառապես Բաժանորդի դիմումի հիման վրա: Վճարահաշվարկային համակարգերի միջոցով վճարում կատարելու դեպքում սխալ վճարումներն ուղղվում են տվյալ վճարահաշվարկային համակարգի կողմից:

6.6. Բանկային վճարումները, ինչպես նաև Օպերատորի գործակալների միջոցով կատարված վճարումները, արտացոլվում են Օպերատորի Բիլինգային համակարգում՝ մինչև վճարման կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

Վճարումը կատարվում է Իսիփեյ, Թելսել վճարային տերմինալների, ինչպես նաև առցանց եղանակով՝ բանկային կրեդիտ կամ դեբետ քարտերի միջոցով:

6.7. Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից վճարման համար պատշաճ կերպով լիազորված և այդ լիազորության իրականացման նպատակով վերջինի անունից և համար գործող:

Վճարային քարտերով առցանց վճարումներ կատարելիս պարտավոր եք պահպանել նման վճարումների համար սահմանված անվտանգության կանոնները:

6.8. Բաժանորդի վճարման պարտավորությունը համարվում է կատարված վճարման ենթակա գումարը Օպերատորի հաշվեհամարին կամ դրամարկղ մուտքագրման պահից:

Վճարման ձևի առանձնահատկություններից ելնելով՝ մատուցված որոշ ծառայությունների համար Բաժանորդից գանձվող գումարները կարող են Բաժանորդի անձնական հաշվում արտացոլվել ուշացումով:

6.9. Վճարումն ուշացնելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի ուշացրած յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել տույժ:

7. Անձնական տվյալների պաշտպանությունը

7.1. Օպերատորը պարտավոր է պահպանել Բաժանորդի այն անձնական տվյալների գաղտնիությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, որոնք Դուք տրամադրել եք Բաժանորդագրվելիս: Անձնական տվյալներ են համարվում նաև Բաժանորդի

կողմից օգտագործվող Ծառայությունների տեսակի, ծավալի, օգտագործման վայրի, վճարումների, տեխնիկական պայմանների վերաբերյալ և այլ տեղեկատվությունը:

7.2. Ստորագրելով Բաժանորդային պայմանագիրը՝ Բաժանորդը համաձայնություն է տալիս Օպերատորի կամ իր լիազորած անձի կողմից իրականացնել Բաժանորդի անձնական տվյալների մշակում, որն իր մեջ ներառում է Բաժանորդի անձնական տվյալների հավաքում, ամփոփում, մուտքագրում, թարմացում և մատուցվող Ծառայությունների հետ կապված այդ տվյալների փոխանցում և այլ գործողությունների իրականացում:

7.3. Բաժանորդի անձնական տվյալները կարող են հրապարակվել բացառապես Բաժանորդի թույլտվությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմանագրով սահմանված դեպքերում: Սույն կետում նշված դեպքերում անձնական տվյալների բացահայտման դեպքում Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից պահանջել վնասների հատուցում:

7.4. Բաժանորդային պայմանագիրը ստորագրելով Բաժանորդն ընդունում է, որ Ծառայությունների մատուցման նպատակով Օպերատորին տրամադրած Բաժանորդի հեռախոսահամարները կամ էլեկտրոնային հասցեները կարող են օգտագործվել Ծառայությունների մատուցման հետ կապված կարճ հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ կամ հեռախոսազանգեր ուղարկելու նպատակով:

8. Պատասխանատվությունը

8.1. Սույն Պայմանագրին և Բաժանորդային պայմանագրին ոչ համապատասխան Ծառայություններ մատուցելու համար Օպերատորի պատասխանատվության չափը չի կարող գերազանցել Բաժանորդի ընտրած Սակագնային պլանին համապատասխանող բաժանորդային ամսական վճարի չափը:

8.2. Բոլոր դեպքերում Բաժանորդը չի կարող Օպերատորից պահանջել վճարել անուղղակի վնասները և բաց թողնված օգուտը:

8.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:

8.4. Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել իր կրած բոլոր այն վնասները, որոնք կրել է Բաժանորդի կողմից Պայմանագրեր խախտելու հետևանքով:

8.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

9. Անհատթափարեղի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Բաժանորդային պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Օպերատորը կամ Բաժանորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհատթափարեղի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Բաժանորդային պայմանագիրը կնքելուց հետո, և որը Օպերատոր կամ Բաժանորդը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Մասնավորապես՝ այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, մայրուղային ենթակառուցվածքների խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ակտը և այլն, որոնք անհնար են դարձնում Բաժանորդային պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Օպերատոր կամ Բաժանորդն իրավունք ունեն լուծել Բաժանորդային պայմանագիրը՝ այդ մասին

նախապես 5 (հինգ) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

10. Վեճերի լուծման կարգը

Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Բաժանորդային պայմանագրից բխող և դրա կապակցությամբ ծագած բոլոր վեճերը, բացառությամբ Օպերատորի կողմից Բաժանորդից չվճարված Բաժանորդային վարձի բռնագանձման հետ կապված վեճերի, լուծվում են ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ Արբիտրաժային կանոնների հիման վրա: Վեճը լուծվելու է **մեկ արբիտրի** կողմից: Արբիտրաժի վայրը Երևանն (Հայաստան) է, իսկ արբիտրաժի լեզուն հայերենն է: Վեճի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

11. Եզրափակիչ դրույթներ

11.1. Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Սույն Պայմանների հրապարակում է համարվում Օպերատորի պաշտոնական ինտերնետային էջում հրապարակելը:

11.2. Սույն Պայմաններով և Բաժանորդային պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: